

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

N << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-22/18-5 >>

ք. Երևան

« 14 » հունիսի 2022 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժ/պ Ի. Օսիպյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱԼԼ Գրուպ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս.Զաքարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Բ-2 թաղ. Իսակովի 26 շենքի հարող տարածքի վերակառուցման և Օհանովի 72 շենքից դեպի Մալաթիա փող. 94/4 և 94/6 տներ տանող անցուղու աստիճանների վերակառուցման աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2-ի:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից հասկանալի է, որ 3.1.3 կետում նախատեսված հիմքերով

3.1.5 «Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարման և/կամ օգտագործման թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պլանկները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 12241104 (տասերկու միլիոն երկու հարյուր քառասունմեկ հազար հարյուր չորս) ՀՀ դրամ, որից 2040184 (երկու միլիոն քառասուն հազար հարյուր ութսունչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,18 (զրո ամբողջ տասնութ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 3 (երեք) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, սեփական մարմինների անբերք և ամեն օրոքը անհնարին են դառնում սույն

(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքի Մալախա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական դամբարանատարան

Հ/Հ 900052470508

ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան

Կստորագրություն

Կ.Տ

Կապալառու

«ԱԼԼ Գրուպ» ՍՊԸ

ՀՀ, ք.Երևան, Դավիթաշեն 1 Թղմ. 40/42

h/h 1181102258690

«ԱՅԴԻ բանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ 00141686

Ս.Զաքարյան

(ստորագրություն)

ԾԱՎԱԼԱԹԵՐԹԸ

**Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Բ-2 թաղ. Իսակովի փ. հ.26 շենքին հարող տարածքի
վերականգնման աշխատանքներ**

h/h	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Միավորի արժեք	Գումար հազ. դրամ
1	2	3	4	5	6
	Զբոսայգու վերականգնման աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Գոյություն ունեցող մետաղական կարկասով շինության քանդում	տն	4.5	25.000	112.500
2	Սալապատ անցուղու քանդում	մ3	0.55	16.000	8.800
3	Բետոնե հարթակի քանդում	մ3	0.26	16.000	4.160
4	Խամբարաբետոնե հենապատի քանդում	մ3	3.93	15.000	58.950
5	Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում	100մ	1.5	120.000	180.000
6	Եզրաքարերի կողքի մսֆ/բետ. ծածկույթի քանդում	մ³	1.884	5.000	9.420
7	Շին. աղբի տեղափոխում 13 կմ լցակայան	տն	8.532	4.000	34.128
	Ընդամենը				407.958
	Հողային աշխատանքներ				
1	Գրունտի մշակում 0,5մ3 տարողությամբ էքսկավատորով, III կարգ/բարձելով ավտոինքնաթափ	100մ³	0.055	85.000	4.675
2	Խաղահրապարակի ուղղում և համահարթեցում I կարգ	100մ²	0.423	20.000	8.460
3	Հիմնատակի խտացում 6տ գլղոնով 25սմ շերտի հաստությամբ	100մ³	0.105	20.000	2.100
4	Մայթերի գրունտի մշակում 0,5մ3 տարողությամբ էքսկավատորով, III կարգ/բարձելով ավտոինքնաթափ	100մ³	0.1721	85.000	14.629
5	Գրունտի տեղափոխում 13 կմ լցակայան	տն	38.607	2.200	84.935
	Ընդամենը				114.799
	Եզրաքարերի կողքի քանդված ասֆալտե տրոնե ծածկույթի վերանորոգում				
1	Խճային հիմքի կառուցում 12 սմ հաստությ.	100մ²	0.2355	300.000	70.650
2	Բիտումով տոգորված խճային հիմքի կառուցում 4սմ հաստությ. 4,12կգ 1մ²	100մ²	0.2355	110.000	25.905
3	Քանդաց ծածկույթի վերականգնում մանրահատիկ ասֆ/բետոնից 5սմ հաստությ.	100մ²	0.2355	200.000	47.100
	Ընդամենը				143.655
	Անցուղիների և մայթերի կառուցում				
1	Եզրաքարերի և եզրաշարերի հիմքերի գրունտի մշակում 0,4մ3 տարողությամբ էքսկավատորով, III կարգ/բարձելով ավտոինքնաթափ	100մ³	0.1746	120.000	20.952
2	Տեղափոխում 13 կմ լցակայան	տն	29.682	4.000	118.728
3	80*200 Բետոնե եզրաշարերի տեղադրում Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա/	100մ	2.125	180.000	382.500
4	150*300 Բազալտե եզրաքարերի տեղադրում Բ12,5 դասի բետոնյա հիմքի վրա/	100մ	0.785	180.000	141.300
5	Անցուղիների ավազակոպճային հիմքի կառուցում 10 սմ հաստությ.	100մ²	1.2994	180.000	233.892

7	Ցեմենտ/140կգ 100քմ	տ	0.18	65.000	11.700
8	Զբոսայգու անցուղիների սալիկապատում 50 մմ բետոնե/տոմենտային սալիկներով	100մ ²	1.2994	760.000	987.544
9	Մայթի ավազակալճային հիմքի կառուցում 10 սմ հաստությամբ	100մ ²	1.324	120.000	158.880
10	Մայթի ծածկի շերտի իրականացում մանրահատիկ Դ տիպի ասֆալտբետոնե խառնուրդից 3 սմ հաստությամբ	100մ ²	1.324	350.000	463.400
	Ընդամենը				2778.776
	Խաղաղաշտի կառուցում				
1	Խճային հիմքի կառուցում 10,0 սմ հաստությամբ բազալտե 40-70 խճով և 10-20 բազալտե մանրախճով	100մ ²	0.423	900.000	380.700
2	Բետոնե հիմնատակի կառուցում B-12,5 դասի ծանր բետոնով, h-100մմ	մ ²	42.3	2.200	93.060
3	Բետոնե շերտի ամրանավորում / ներառյալ եզրաքարերը / Bp=5մմ բջիջը 200*200մմ ամրանային ցանցով	տմ	0.065142	55.000	3.583
4	Bp=5մմ բջիջը 200*200մմ ամրանային ցանցի արժեք	100մ ²	0.423	240.000	101.520
5	Բետոնի հղկում	100մ ²	0.423	50.000	21.150
6	Դեֆորմացիոն կարերի կտրում / p.2000 /	100զմ	0.36	65.000	23.400
7	Սպորտային, ռետինե, գունավոր հատակի կառուցում 10մմ հաստությամբ	100մ ²	0.42	650.000	273.000
	Ընդամենը				896.413
	Տարածքի կանաչապատում				
1	Հողի պատրաստում և փխրեցում ձեռքով	100մ ²	2.9	15.000	43.500
2	Բուսահողի շակում 0,65մ3 տարողությամբ էքսկավատորով, 1 կարգ/բարձելով ավտոմեքենայով	100մ ³	0.29	120.000	34.800
3	Տեղափոխում 13 կմ շինհրապարակ	տմ	0.464	4.000	1.856
4	Սիզամարզի ցանում ձեռքով/ 10 սմ հաստությամբ	100մ ²	2.9	15.000	43.500
5	Սիզամարզի սերմ/ 2 կգ 100քմ	կգ	5.8	1.700	9.860
	Ընդամենը				133.516
	Հենապատերի կառուցում				
1	Հենապատի հիմքի խրամուղու փորում 0,5մ3 տարողությամբ էքսկավատորով/ կողիցք	100մ ³	0.0375	120.000	4.500
2	Բետոնե մախապատրաստական շերտ հիմքերի տակ Բ 7,5 բետոնից	մ ³	0.65	45.000	29.250
3	Ժապավենային հիմքերի իրականացում խամքարաբետոնից	մ ³	3.1	40.000	124.000
4	Հենապատի շարվածք խամքարով	մ ³	2.05	40.000	82.000
5	Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=50մմ	մ	2	0.600	1.200
6	Հենապատի սկաղ ցեմենտավազե շաղախով	մ ²	13.66	2.000	27.320
7	Բազալտե ծածկասալերի տեղադրում 50մմ	100մ ²	0.052	630.000	32.760
8	Խճի ֆիլտրող շերտի իրականացում	մ3	3.3	9.000	29.700
9	Ավազի ֆիլտրող շերտի իրականացում	մ3	3.3	3.000	9.900
10	Հենապատի հետմամասի լիցք տեղի մշակված գրունտով	մ ³	1.5	0.150	0.225
	Ընդամենը				340.855
	Նստարանների կառուցում				
1	Բետոնե հիմքի կառուցում B-12,5 դասի բետոնից	մ ³	0.9	35.000	31.500
2	Պողպատյա քառակուսի խողովակ 40*40*2	զմ	60.6	0.250	15.150
3	Փայտյա չորսու 40*80	մ ³	0.1038	190.000	19.722
4	Փայտյա չորսու 40*50	մ ³	0.108	190.000	20.520
5	Պողպատյա թիթեղ 2մմ	մ ²	0.24	8.000	1.920
6	Նստարանների երկշերտ ներկում	100 մ ²	0.26544	150.000	39.816
	Ընդամենը				128.628
	Աղբամանների կառուցում				
1	Բետոնե հիմքի կառուցում B-12,5 դասի բետոնից	մ ³	0.15	35.000	5.250
2	Պողպատյա քառակուսի խողովակ 40*20*1,5	զմ	7.8	0.250	1.950
3	Բետոնե հիմքի կառուցում B-12,5 դասի բետոնից	մ ³	0.6	0.300	2.880

6	Դույլի կառուցում 0,5մմ ցինկապատ թիթեղից	մ ²	2.37	3.000	7.110
	Ընդամենը				27.423
	Գծային ճոճանակի կառուցում				
1	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով /Փոսորակների փորում հեմասյունների տակ	100մ ³	0.0075	350.000	2.625
2	ճոճանակի բետոնե կետային հիմքի իրականացում / Բ 12,5դասի բետոնով	մ ³	0.075	55.000	4.125
3	Մետաղական կարկասի կառուցում	տ	0.043	150.000	6.450
4	Պողպատյա ուղղ. խողովակ 80*40*3	զմ	5.96	0.600	3.576
5	Պողպատյա ուղղ. խողովակ 40*20*2	զմ	6.06	0.500	3.030
6	Պողպատյա խողովակ d=20*1	զմ	2.8	0.700	1.960
7	Պողպատյա խողովակ d=51*2	զմ	0.3	0.900	0.270
8	Պողպատյա առանցքակալ	հատ	2	6.000	12.000
9	Պողպատյա ներդիր 400*400*4	մ ²	0.16	2.500	0.400
10	Փայտյա չորսու 50*30	մ ³	0.011	190.000	2.090
11	Մետաղական և փայտե տարրերի երկշերտ ներկում	100 մ ²	0.03413	150.000	5.120
	Ընդամենը				41.646
	Երկտեղանոց ճոճանակի կառուցում				
1	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով /Փոսորակների փորում հեմասյունների տակ	100մ ³	0.004	350.000	1.400
2	Երկտեղանոց ճոճանակի բետոնե կետային հիմքերի իրականացում / Բ 12,5դասի բետոնով	մ ³	0.4	55.000	22.000
3	Մետաղական կարկասի կառուցում	տ	0.11	150.000	16.500
4	Պողպատյա խողովակ d=76*6	զմ	6.17	1.500	9.255
5	Պողպատյա խողովակ d=20*2,0	զմ	11.08	0.600	6.648
6	Պողպատյա ուղղ. խողովակ 40*20*2	զմ	6.06	0.500	3.030
7	Սանեկ/ հեղուս	կգ	10	1.300	13.000
8	Պողպատյա առանցքակալ	հատ	4	6.000	24.000
9	Պողպատյա ներդիր 300*300*6	մ ²	0.36	2.500	0.900
10	Փայտյա չորսու 50*30	մ ³	0.011	190.000	2.090
11	Մետաղական և փայտե տարրերի երկշերտ ներկում	100 մ ²	0.04166	150.000	6.249
	Ընդամենը				105.072
	5 տեղանոց կառուսելի կառուցում				
1	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով /Փոսորակների փորում հեմասյունների տակ	100մ ³	0.0026	350.000	0.910
2	Երկտեղանոց ճոճանակի բետոնե կետային հիմքերի իրականացում / Բ 15դասի բետոնով	մ ³	0.256	53.000	13.568
3	Մետաղական կարկասի կառուցում	տ	0.2390	250.000	59.750
4	Պողպատյա ուղղ. խողովակ 60*40*3	զմ	16.13	1.500	24.195
5	Պողպատյա ուղղ. խողովակ 50*30*3	զմ	1.032	0.800	0.826
6	Պողպատյա ուղղ. խողովակ 40*40*2	զմ	9.1	0.600	5.460
7	Պողպատյա ուղղ. խողովակ 40*20*2	զմ	14.55	0.600	8.730
8	Պողպատյա խողովակ d=20*2	զմ	13.101	0.600	7.861
9	Պողպատյա խողովակ d=219*6	զմ	0.68	8.000	5.440
10	Պողպատյա խողովակ d=108*4	զմ	0.95	7.000	6.650
11	Սանեկ/ հեղուս	կգ	10	1.300	13.000
12	Պողպատյա առանցքակալ	հատ	2	6.000	12.000
13	Պողպատյա թիթեղ 3մմ	մ ²	3.14	2.500	7.850
14	Պողպատյա ներդիր 600*600*6	մ ²	0.36	2.500	0.900
15	Փայտյա չորսու 50*30	մ ³	0.027	190.000	5.130
16	Մետաղական և փայտե տարրերի երկշերտ ներկում	100 մ ²	0.1735	150.000	26.025
	Ընդամենը				198.294
	Մետաղական բազրիքի կառուցում				
1	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով /Փոսորակների փորում հեմասյունների տակ	100մ ³	0.00756	350.000	2.646
2	Երկտեղանոց ճոճանակի բետոնե կետային հիմքերի իրականացում / Բ 15դասի բետոնով	մ ³	0.756	55.000	41.580
3	Մետաղական կարկասի կառուցում	տ	0.92	135.000	124.200
4	Պողպատյա ուղղ. խողովակ 60*40*3	զմ	153.3	1.500	229.950

7	Մետաղական ցանկապատի երկշերտ ներկում	100 մ ²	0.4719	150.000	70.785
	Ընդամենը				556.017
	Տաղավարի կառուցում				
	Հողային աշխատանքներ				
1	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով խրամուղում/ հիմքերի փորում	մ ³	0.86	3.500	3.010
2	Բետոնե կետային հիմքերի իրականացում / Բ 12,5դասի բետոնով	մ ³	0.86	41.500	35.690
	Ընդամենը				38.700
	Տաղավարների մետաղական կարկասի պատրաստում պրոֆիլավոր խողովակներից				
1	Մետաղական կարկասի կառուցում	տ	0.261	135.000	35.235
2	Պողպատյա ուղղանկյուն խողովակ 60*40*2	զմ	10.8	1.500	16.200
3	Պողպատյա քառակուսի խողովակ 40*40*2	զմ	61.47	0.600	36.882
4	Պողպատյա քառակուսի խողովակ 50*30*2	զմ	5.2	0.850	4.420
5	Պողպատյա քառակուսի խողովակ 25*25*1,5	զմ	67.25	0.300	20.175
6	Պողպատյա քառակուսի խողովակ 20*20*1	զմ	33.6	0.300	10.080
7	Փայտյա չորսու 40*50	մ ³	0.061	190.000	11.590
8	Պողպատյա թիթեղ 2մմ	մ ²	1.6	2.500	4.000
9	Պողպատյա ներդիր 300*300*4/4 հատ	մ ²	0.36	2.500	0.900
10	Պողպատյա ներդիր 150*150*2/6հատ	մ ²	0.135	2.500	0.338
11	Մետաղական կարկասի երկշերտ յուղաներկում	100 մ ²	0.46	150.000	69.000
	Ընդամենը				208.820
	Ծածկի կառուցում				
